

Հրատարակութիւն Ս. Ղազարի Հայկական Կանառին

Publication de l'Académie Arménienne de Saint-Lazare - Venise

ԳԻՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԿԵՒՌԱՅԻ


Գէորգ վարդապետ Սկեռացի որքան որ մեր հին Գրականութեան փայլուն ղէմքերէն նկատուած չըլլայ, սակայն իր դարուն կատարած է մեծ դեր մը, գլխաւորապէս եկեղեցական մարդին մէջ՝ բայց դրական տեսակէտով ալ. այս պատճառով Գահիրէի Փրանկիսկեան **Studia Orientalia Christiana**-ի անդամ P. Vincent Mistrih գեղեցիկ գաղափարը ունեցեր է ճանչցնել օտար Հայադէտներու Գէորգ վարդապետ Սկեռացին, կոչուած նաեւ Լամբրոնացի, Լամբրոնի մէջ ծնած ըլլալուն համար: Իր մասին մեր ծանօթութիւնները նոր լոյս մը ըստացան Ալիշանի Սիսուանով¹ ու Հայապատումի² մէջ հրատարակած Մովսէս Երզնկացիի Համառօտ Դրուատով, գրուած Գէորգի մահուան առիթով եւ որու ինքը աշակերտած էր: Իսկ 1964ին Երեւանի Մատենադարանն է որ տուաւ մեզի անանուն հեղինակի մը կողմէ գրուած ջատագովական կենսագրութիւն մը, որ հրատարակուեցաւ Էդուարտ Բաղդասարեանի կողմէ Բանբեր Մատենադարանի եօթներորդ թիւին մէջ³, Համառօտ ուսումնասիրութեամբ մը: P. Mistrih միացնելով այս երկուքին Վիեննայի Միթթարեան Մատենադարանի թիւ 7 ձեռագրին մէջ գտնուած նոյնպէս անանուն եւ Համառօտ կենսագրութիւնը ու թարգմանելով Փրանսերէնի՝ կը հրատարակէ Մովսէս Երզնկացիի Դրուատը եւ Վիեննայի Մատենադարանի գրուածքը Հայերէն բնագրով միասին, իսկ ընդարձակ կենսագրութեան միայն Փրանսերէն թարգմանութիւնը:

Ամբողջ գիրքը կը բաղկանայ 114 էջերէ՝ միջին ծաւալով: Բնագիրներուն կը յաջորդեն ութ էջեր՝ Հայերէն ձեռագիրներու նկարներէն ու գրութենէն հանուած լուսատիպ նմոյշներու, յետոյ՝ կը տրուին անուններու ցանկեր Հայերէն ու Փրանսերէն, եւ հուսկ գրքին ընդհանուր ցանկը. այս վերջինս երեք էջ:

1. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուան, Վենետիկ, էջ 98, 102-106, 532:

2. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Հայապատում, Վենետիկ, էջ 504-7:

3. Բանբեր Մատենադարանի, Երեւան, 1964, Թիւ 7, էջ 399:



Կը հրատարակուի «Գալուստ Կիւլպենկեան Հիմնադրութեան» մպաստով
Publié avec le concours de la «Fondation Calouste Gulbenkian»

P. Mistrih մեծ խնամքով ջանացած է իր աշխատանքին ընծայել գիտական նկարագրի, փնտռելով ու քննարկելով աղբյուրներ, ու այս իր աշխատանքին ձեռնադրել է նաև Երեւանի Մատենադարանը, ինչպէս կը տեղեկացնէ հրատարակողն ալ: Յօրինած է կենսագրական ուրուագիծ մը՝ որքան կրնան թոյլ տալ մեր ձեռքը հասած աղբյուրները. նմանապէս ցանկ մը Գէորգի ընծայուած գրական գործերուն՝ մեծ ու փոքր. անշուշտ փոքրիկները՝ Գանձ, Տաղ, Գարող եւն. քննութեան կարօտ են, որովհետեւ Սկեւռացին կանխող Գէորգներու մերթ կը հանդիպինք ձեռագիրներու մէջ, ու դժուարին է դատաստան մ'ընել: Հարկաւոր է նկատել որ հայերէն բնագիրներուն մէջ տպագրական վրիպակներ սպրդած են ու ասիկա անխուսափելի է կարծեմ ոչ հայ տպագրողներու համար. այսպէս, օրինակ մը լոկ տալու համար, 108 էջի իններորդ տողի նկարագրելու եղած է նկատեմ: Նպատակ չունիմ կատարուած թարգմանութեանց արդիւնքով դրադել, այլ աւելի կարեւոր կը համարիմ այս առիթով մէկ քանի անդրադարձութիւններ կատարել, անանուն ընդարձակ կենսագրութեան աւելնչութեամբ:

Գէորգ Սկեւռացի իր դարուն մեծապէս հռչակուած էր իբր գիտական անձ, իբր ուսուցիչ եւ դրիչ, ու մանաւանդ իբր սրբակեաց անձ: Զեռագիրներէ ստացուած տուեալներու համաձայն իր խօսքը, եւ կամ հարցի մը շուրջ իր տեսութիւնը նկատուած էին իբր պատգամ: Դժբախտաբար իր մասին մեղի հասած կենսագրական տեղեկութիւնները մանրամասն ու լրիւ չեն: Ծնունդի թուականն ալ պարտաւոր ենք ենթադրութեամբ գուշակել: Իբր կենսագրական գրութիւն ունինք Յայտնաբերի մը մէջ պահուած համառօտ գրուածք մը, ուր կը խօսուի իր վրայ իբր տօնելիք սուրբի մը: Երկրորդ գրութիւնն է իր աշակերտ Մովսէս Երզնկացիի յօրինած «Դրուատ բանի սուղ ինչ պատմադրաբար»⁴, Գէորգի մահուան առիթով յօրինուած, արձակ ու մաս մը տաղաչափուած. տեղեկութիւններ տալէ աւելի, գրողը կը փառաբանէ իր ուսուցիչը եւ կ'աւագէ անոր կորուստը: Երրորդ գրութիւնը⁵ ամէնէն ընդարձակն է, առանց հեղինակի անուան, բայց գրողը ծանօթ է Մ. Երզնկացիի Դրուատին, եւ ձեռագիրը՝ որու մէջ պահուած է գրուածքը, 1322ին ընդօրինակուած է, որով Գէորգի մահէն քսանեւեմէկ տարի յետոյ: Կ'երեւի թէ հեղինակը շատ բան տեղեկացած է Գէորգի աշակերտներէն. իսկ տեղեր ալ կան, ուր կը պատմէ իբր ներկայ եղած պատահած դէպքերու: Որքան կարելի է չափով մը կը հետեւի Գէորգի կեանքի ընթացքին, բայց կարծես իր բուն գիտումը կենսագրական տեղեկութիւններ տալ չէ, այլ գլխաւորա-

պէս ցոյց տալ Գէորգի մէջ անձին մեծութիւնը ու կատարած դերը՝ գիտական ու եկեղեցական մարզերու մէջ. չեչուած է մասնաւորապէս կեանքին սրբութիւնը, ու կը ներկայացնէ անձը ճոխացած բոլոր գերբնական առաւելութիւններով: Որով չենք դտներ հոն բնական կեանքը հիւսող դէպքեր, որոշ տարեթիւներ, ինչպէս նաև մարդկային անձը բնորոշող եւ ցուցադրող տարրները՝ խառնուածք, բնութիւն, նկարագիր, ինչպէս կը նկատուին միւս գործող անձերու մէջ: Յետոյ պատկերացումը որ կու տայ, աւելի գաղափարական սուրբի մըն է, յաճախ գրքերու մէջ կարգացած ու դտած սահմանումներով եւ բացատրութիւններով: Չարին՝ այսինքն դեւին դէմ պայքարը ու ասոր նկարագրականը, հեղինակին սիրելի նիւթերէն է. իսկ Գէորգի գաղափարակից չեղողները կը գործեն միշտ մղուած Չարէն:

Այս երեքն են ահա այն գրաւոր աղբյուրները, որ հասած են մեզի նկատմամբ Գէորգի կեանքին ու գործունէութեան, անկատար ու մասնայատուկ դիտումներով յօրինուած. բայց իրենց այս վերաւոր նկարագրով հանգեւ, մանաւանդ ընդարձակ կենսագրութիւնը իր միակողմանի վերաբերումով, գլխաւոր վաւերացութեամբ կը կազմեն նկատմամբ Գէորգի կեանքին:

Բարեբախտաբար հասած են մեզի մէկ քանի որոշ եւ ճշգրիտ թուականներ, որոնք հիմնական կարեւորութիւն ունին: Նախ ծանօթ ենք իր մահուան թուականին, որ պատահած է 20 = 1301-2ին, յիշատակուած վաւերական աղբյուրներէ⁶: Իսկ ընդարձակ կենսագրութիւնը կը տեղեկացնէ թէ Գէորգ սարկաւազ ձեռնադրուած է տասնեութ տարեկանին⁷: Մեղի հասած է նաև յիշատակարան մը գրուած Գէորգի ձեռքով իր ընդօրինակած Տօնապատճառին մէջ՝ Արեւելեան Հայտնի ձեռքով իր ընդօրինակած Տօնապատճառին մէջ⁸, եւ ուր տեղեկութիւններ կու յայտնան գտնուած ժամանակ, 1267⁹, եւ ուր տեղեկութիւններ կու տայ զինքը հիւրընկալող վարդապետներու եւ իր ուսուցիչի մասին: Ինչ որ կ'երեւի հեռացած է Կիլիկիայէն տակաւին քահանայ չձեռնադրուած⁹. Ենթադրելով որ մերձաւորապէս քսան տարեկան ըլլար՝ Հայաստան ուղեւորած ժամանակ, իրապէս յիշատակարանին մէջ ինքզինքը կը ներկայացնէ պատանի, բանաւոր է իր ծնունդը դնել 1245-7ին, ինչ որ ուրիշներէ ալ ընդունելի եղած է: Թէ ո'րքան տեւած է իր ուսումնական ընթացքը արեւելեան Հայաստանի մէջ՝ յայտնի չէ, բայց ապահովապէս Արեւելք կը գտնուէր 1265ին, ու հոն կը հասնի իրեն լուրը Եգիպտոսի սուլթանին կատարած արշաւանքներուն

6. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Հայապատում, էջ 504: ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՅԻ, Հաւաքումն է գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 155:

7. Բանբեր Մատենադարանի, Թ. 7, էջ 414:

8. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց, Վենետիկ, 1924, Հտ. Բ., էջ 312-4:

9. Բանբեր Մատենադարանի, Թ. 7, էջ 416:

4. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Հայապատում, էջ 504-7:

5. Բանբեր Մատենադարանի, Թ. 7, էջ 410-433:

դէպի Կիլիկիա, աւերելով երկիրը, կործանելով քաղաքներ եւ ամրոցներ, եւ Հեթում թագաւորի որդիներէն կը սպաննուի Թորոսը, իսկ Լեւոն դերի կը բռնուի: Գէորգ իր յիշատակարանին մէջ այս առիթով կը յայտնէ սրտին կսկիծը: Հայաստանի մէջ իր ուսուցիչն է Վարդան վարդապետ պատմիչ, որ կը վախճանի 1270-1ին¹⁰. Հաւանական է որ անոր մահէն վերջ ինքն ալ շատ ուշացուցած չըլլայ դէպի Կիլիկիա իր վերադարձը: Իր ծննդավայրը դալով կը գտնէ վախճանած հայրը ու պառակտած մայրը¹¹: Կ'երեւի որ գրչութեան արուեստին մէջ Գէորգ սկիզբէն ցոյց տուած է յատուկ ձեռնհասութիւն մը, որով իրեն ընդօրինակել կու տան այդ Տօնապատմաւր, 477 թերթ (թուղթ), 20½×16 հմդ. ծաւալով, մի էջեան, բոլորդէր վայելուէ՝ առանց յատուկ գեղեցկութեան¹²:

Լաւ է աչքի առջեւ ունենալ այդ Յիշատակարանին կարեւոր մասերը: Գոհարապահան երկարաշունչ մաղթանքէ մը վերջ Գէորգ կը գրէ. «Յոգնատենչ ըղձիւք բաղձացեալ քաջ հռետորին... միջամուխ մակացուն աստուածայնոյ տառից սրբազան քահանայն Գրիգոր, ըստ պատմութեան քանի» մինչ այրարատեան նահանգին կարողապետութիւնը կը վարէր աստուածապատուեալ ծերունին Արհի եպիսկոպոսը, Տէր Գրիգոր, Բջնի ամրոցին մէջ, «ընդ նմին (Տն. Գրիգորի) եւ զհամապատիւ ինքեան զձեռասուն ուղեակսն իւր հոգեւոր, զՏէր Վարդան, հարազատ եղբարքն իւրով նախայիշեցեալ Գրիգորիւ, եւ զՏէր Դաւիթ, քուերորդի Տեառն Գրիգորի, որոց կամօք եւ յօժարութեամբ յանկ ելեալ կատարեցաւ Պատմապատմաւալ տօնից, ի լրումն բաղձանացն Գրիգորի վարդապետի...: Եւ եղեւ աւարտ գրչութեան սորա ի ձեռն տարաշխարհիկ պատանուոյ ումեմն թարմատար գրչի Գէորգա, ի Կիլիկեան նահանգէն, յանմատչելի ամրոցէն Ղամբրաւնի կոչեցելոյ, որ է ի ստորոտ մեծի լերինն Տաւրոսի: Որ ոչ եթէ իբրու ճարտար գոլով յարհաստ գրչութեան յանձնապատաստան համարձակութեամբ ձեռնամուխ եղեւ ի գործ, որ ի վեր էր քան զկար նորա, այլ ի յոլով խնամս վայելեալ նախասացեալ արանցն փառաւորաց... ձեռն ի գործ արկեալ սատարութեամբ նժդեհակցի պանդխտութեան իւրոյ... Յովհաննու քահանայի, ի չըջագայութեան ամանակաց թըւաբերութեան հայկականս ազին գումարի յարաբարդեալ ամաց չորեքտասան յիսնեկաց, հանդերձ առաջին կատարեալ թուով վեցաւաւ ընդ տասնեկի շարքմանելոյ» (ԶԺԶ = 1267): Տօնապատմաւրին

10. ՊՕՂԱՐԵԱՆ ՆՈՐԱՅՐ ԵՊ., Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1966, Հտ. Ա., էջ 146:

11. Բամբեր Մատեմադարանի, Թ. 7, էջ 416:

12. Շոգակաթ, Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, Ա., էջ 202:

13. ՊՕՂԱՐԵԱՆ Ն. ԵՊ., Մայր Յուցակ, Ա., էջ 584:

զանազան մասերը կը գրուին այլեւայլ տեղեր. կը սկսի Վերապի Ուխտին մէջ հաւանօրէն 1266ին. հոս է որ կը կենան ժամանակ մը «սակս կրթութեան ի մեծ վարդապետէն եւ յաստուածազդեաց առնէն Վարդանայ»: Յետոյ կ'ընկերանայ անոր մինչեւ Սաղմոսավանք, ուր կ'աւարտի առաջին մասը: Հոսկի գրքին ստացողէն կը ղրկուին Թեղենեաց Ուխտը, որ իր բուն մենաստանն էր, եւ հոն կ'աւարտէ ընդօրինակութիւնը: Այս տարիներու է որ Վարդան վարդապետ ալ կը յօրինէր իր Մեկնութիւնը Դանիէլի մարգարէութեան, 1268ին, «Ի Ս. Ուխտն Աղջոց Վանաց»:

Գէորգ վերադառնալով իր հայրենիքը, Կիլիկիա, անշուշտ սկըզբնաւորած պիտի ըլլայ ուսուցչական իր գործունէութիւնը Սկեւռայի մենաստանին մէջ, բայց թէ ինչ տիտղոսով ու ձեռքով՝ յայտնի չէ: Ձեռագիրներու մէջ միշտ կը յիշատակուի վարդապետ տիտղոսով ու իբր հոգեւոր հայր. հետեւաբար ստացած ըլլալով վարդապետական աստիճանը եւ քարոզելու իշխանութիւնը, հաւանօրէն իր ուսուցչական գործակետ Վարդան վարդապետէն, ձեռնարկած է ուսուցչական գործին: Իրապէս շատեր դիմած են իրեն ուսանելու համար: Ստեփանոս Գոյներ Երիցանց, անուանի գրչութեան արուեստին մէջ, կը գրէ 1297ի տետնները. «Ութեւտասն ամ կացի առ ոտս Ս. Վարդապետին Գէորգա Լամբրաւնցոյ եւ կարի հարուստ լուեալ իմ, ի նմանէ ունիմ եւ իւր ձեռացն դիր վասն Կիւրակէին»¹⁴: Այսպէս դեռ ուրիշ շատեր, որոնց անուններուն կը հանդիպինք ձեռագիրներու մէջ, բայց չեն յիշեր զինքը իբր առաջնորդ Սկեւռայ վանքին: 1272ին Ստեփանոս քահանայ կ'ընդօրինակէ մանրուամուկ մը «Ի խնդրոյ Գրիգորի քահանայի եւ ի յիշատակ առաջին ուսուցչին իւրոյ հոգեւոր Տեառն եւ վարդապետի, Սիմէոնի, առաջնորդի սուրբ Ուխտին Սկեւռայ»¹⁵: Տէր Սիմէոնը կանխած պիտի ըլլայ այդ պաշտօնին մէջ Տէր Միսիթար Սկեւռային, որու խնամքին յանձնուած էր Գէորգ, իր մօրեղբոր կողմէ, երբ սա եպիսկոպոս պիտի ձեռնադրուէր: Նոյն Ստեփանոս քահանայ կ'օրինակէ Աստուածաշունչ մը 1285ին խնդրանքով խաչատուր դպրի մը, որ թելադրուած էր Գէորգ վարդապետէն, «առ որում կայր ի վարժս կրթութեանն»: Նոր կտակարանի մասը կ'աւարտէ 1288ին «յառաջնորդութեան Տէր Մինասայ վարդապետի»¹⁶: 1290ի տետնները Սկեւռայի Ուխտին առաջնորդ կը կարգուի Կոստանդին Կաթողիկոս Կատուկեցի¹⁷, դահագուրկ ըլլալէն յետոյ: Այս տուեալները բացորոշ կու տան մեղի 1272-1299ի ընթացքին Սկեւռայի Ուխտին ա-

14. ԹՕՓՃԵԱՆ Թ., Յուցակ Ձեռագրաց Արմաշի վանքի, Վենետիկ, 1965, էջ 395:

15. ՊՕՂԱՐԵԱՆ Ն., Մայր Յուցակ, Ե., էջ 485:

16. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Հայագիտութիւն, էջ 496:

17. ՊՕՂԱՐԵԱՆ Ն., Մայր Յուցակ, Բ., էջ 430:

առջնորդներու կարգը. ըսել է Գէորգ վարդապետի գործունէութիւնը ուսուցչական եւ գրական ասպարէզին մէջ կը ծաւալէր:

Որքան որ Սկեւռայի մենաստանը հաստատուած էր կեդրոնէ հեռակայ, ամուր եւ անառիկ նկատուած վայրի մը մէջ, դժբախտաբար աղատ չմնաց այլազգի թշնամիներու յարձակումներէն: Մեր պատմիչներէն հոռոմ կոչուած թուրքերը արեւելքէն, ու Եգիպտոսի սուլտանները հարաւէն պարբերաբար կ'ասպատակէին Կիլիկիա: Սամուէլ Անեցիի ժամանակաշրջանի երկրորդ շարունակողը կը գրէ թէ 1275ին «Հոռոմոց թուրքն այրեցին զհոգնակաւոր Ուխտն մենաստան ի Սկեւռայ»¹⁸, եւ ուրիշ ժամանակաշրջաններ կը հաստատեն նոյնը: Իսկ Անեցիի առաջին շարունակողը կը գրէ 1279ին¹⁹: Հարկ է նկատել որ գրեթէ տարի չէր անցներ առանց այս ասպատակութիւններուն արեւելքէն կամ հարաւէն: Կ'երեւի թէ այրած Սկեւռայն շուտով կը վերաշինուի ու կը վերսկսի հոն վանական կեանքը եւ ուսումնական գործունէութիւնը, ձեռագիրներու ալ ընդօրինակութիւնը դադար չ'ունենար:

Պատմական տեսակէտով ուրիշ նկատելիք կէտ մըն ալ է այդ տարիներուն յաջորդած կրօնական խնդիրը, այսինքն արեւմուտքի եկեղեցւոյն հետ միութիւնը գոյացնելու առաջարկը: Քանի որ արեւմուտքի քաղաքական եւ վաճառականական ներկայութիւնը զգալի կերպով կ'աճէր Միջերկրականի արեւելեան ծովափին վրայ, հայ քաղաքական, ինչպէս նաեւ եկեղեցական իշխանութիւնները պէտք է որ հարկադրուած ըլլան նկատողութեան առնել այս իրողութիւնը: Ամէնուն ծանօթ է իրերու առած ընթացքը, մանաւանդ 1290է յետոյ: Գէորգ վարդապետ ներկայացուած է իր ընդարձակ կենսագրութեան մէջ միութեան ընդլիմադիր հոսանքին ազդեցիկ անձերէն մին²⁰: Եթէ ասիկա կը համապատասխանէ իրականութեան, ըսել է Ներսէս Լամբրոնացիի Սկեւռայի Ուխտին մէջ ստեղծած միջնորդութեւնը եւ մտայնութիւնը բոլորովին այլապէս էին: Կենսագրութեան հեղինակը կը համարի որ Գէորգ իր այս բռնած դերքին պատճառով կը կախակայուի իր պաշտօնէն. դժբախտաբար թուականներ չի նշանակեր աւելի որոշ տեսնելու իրականութիւնը եւ զաղափար մը կազմելու: Դարձեալ կենսագրին համաձայն, նոր կաթողիկոսի մը ընտրութեան առիթով Գէորգ ամենայարմարը ու արժանաւորն էր այդ դահլիճ բարձրանալու. բայց կամ ինքը կը խուսափէր համեստութեամբ, կամ հակառակորդներ չարութենէ շարժած ամէն հնարք կը գործածէին արդիւրեւ անոր ընտրութիւնը: Ձեռագիրներու համաձայն Գէորգ վարդապետ

1286–1299 տարիներուն միշտ Սկեւռայ է իբր ուսուցիչ: Սիրալիւր են իր յարաբերութիւնները Հեթում Բ. Թագաւորին հետ. ասոր խնդրանքով կամ հարկադրանքով կը յօրինէ 1290ի ատենները Եսայեայ մարդարէութեան խմբագիր մեկնութիւնը: Թոմաս գրիչ կը խմբագրէ Ժողովածոյ մը, որու առաջին մասը կը կազմէ Խրատ գրչուքեանը, զրուած «ի լեառն Տորոսի, յանապատին որ կոչի Արմին, յօրինակէ նորին (Գէորգեայ) ի թուին 202» (1297): Կը խնդրէ յիշել «զհոգեւոր հայրն իմ Գէորգ վարդապետն զարարաւ ի խրատուցս»²¹ 1299ին ալ Եսայեայ խմբագիր մեկնութեան օրինակ մը գրել կու տայ «Կոստանդին Արշիսկիսկոպոս», նախկին կաթողիկոսը, որ այդ ժամանակ Առաջնորդն էր Սկեւռայ Ուխտին²²:

Կենսագրութեան հեղինակը անսահման հիացումով լի է Գէորգ վարդապետի հանդէպ. կը նմանցնէ հայ եկեղեցին երկինքի մը, որուն արեւն է Գէորգ: Անշուշտ հետադարձական ըսելու ձեւ մըն է, սակայն դժբախտաբար պատմութիւնը ժլատ է եղած տեղեկացնելու մեղի Գէորգի կատարած այս լուսաւոր դերի մասին, որպէսզի համոզուինք: Նոյն տարիներուն դահակալող Լեւոն Բ. եւ Հեթում Բ. Թագաւորները յարգած են զինքը եւ սիրած, ու ինչ որ Գէորգ վարդապետ կ'ըսէր իրենց, հլութեամբ կ'ունկնդրէին ու կը կատարէին: Յուշուած կրօնական հարցերուն առած ուղղութիւնն ալ, կենսագիրը կը վերագրէ Վահրամ վարդապետին²³, որ Հեթում Բ.ի դաստիարակը եղած էր. բայց միւս կողմէ անկեղծօրէն կը գրուատէ Վահրամը, իբր դիտնական եւ իբր սրբակեաց անձ: Կրօնական հարցերուն մէջ Վահրամի եւ իր համախոհներու գործունէութիւնը, իրականացնելու համար իրենց ծրագիրը, կենսագիրը կը վերագրէ Չարին: Անշուշտ երբ դեւին միջամտութիւնը գրուի, ամէն ինչ կ'որոշանաւորուի բնոյթ մը կ'առնէ: Կենսագիրը իրերու եւ դէպքերու բնական եւ բանաւոր պատճառներու արդիւնք յառաջխաղացումը նկատողութեան չ'առնէր ու պատահարներու ընթացքին չի հետեւիր, եւ բացատրութիւն մը տալու համար կը դիմէ դեւին միջամտութեան:

Կենսագրութեան մէջ մանրամասն նկարագրուած են նաեւ այն նիւթական տանջանքները, որոնց ենթարկուած պիտի ըլլայ Գէորգ, երբ իր եպիսկոպոս մօրեղբոր մահէն վերջ կ'ամբաստանուի թէ անոր ձգած դրամը եւ զանձը գաղտնի առած եւ պահած է²⁴: Անշուշտ եկեղեցական իշխանութեան կողմէ սահմանուած պիտի ըլլայ այդ պատիժը: Յայտնի չէ թէ երբ վախճանած է Գրիգոր եպիսկոպոս,

18. ՍՍՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, Հատմութեան, էջ 162:

19. ՍՍՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, Անդ, էջ 152:

20. Բանբեր Մատենադարանի, Թ. 7, էջ 428:

21. ՊՕՂԱՐԵԱՆ Ն., Մայր Յուցակ, Գ., էջ 532:

22. ՊՕՂԱՐԵԱՆ Ն., Մայր Յուցակ, Բ., էջ 269:

23. Բանբեր Մատենադարանի, Թ. 7, էջ 421:

24. Բանբեր Մատենադարանի, Թ. 7, էջ 415:

բայց իր եպիսկոպոս ձեռնադրութեան՝ տասնամեայ զարմիկին խընամակալութիւնը կը յանձնէ Մխիթար վարդապետին, որ արդէն 1263ին եպիսկոպոս եւ Առաջնորդ է Սկեւռայի Ուխտին: Արդ Տէր Մխիթար թոյլ պիտի տա՞ր որ իր հոգեզաւակը ենթարկուէր նման նիւթական տանջանքներու, եթէ նոյնիսկ ճիշտ ըլլար Գէորգի վերադրուած յանցանքը: Այս դէպքէն վերջ է որ որոշած պիտի ըլլայ Գէորգ հեռանալ Կիլիկիայէն, կենսադրութեան համաձայն:

Կենսադիրը, ցոյց տալու համար Գէորգի կեանքի սրբութեան բարձր աստիճանը, կը յիշատակէ նաեւ կարգ մը հրաշագործութիւններ՝ կատարուած Գէորգի միջոցաւ²⁵: Անշուշտ կարելի է մերժել հրաշքի իրականութիւնը, բայց կենսադրութեան մէջ սովորաբար անոնք կը ներկայացուին իբր ուրիշներէ տեղեկացուած եւ կամ երազներու եւ տեսիլներու միջոցաւ յայտնուած, ինչ որ ընթերցողին մըտքին մէջ տարակոյսներ կը ծնան:

Նկատել նաեւ Գրիգոր Անաւարդեցիի մասին գրուածներն ալ, որոնք կը գրաւեն Բանբերին թիւ 7, 425-430 էջերը. կենսադրութեան հեղինակը սակայն ուշ է դարձուցած իր նկարագրած դէպքերուն պատմականութեան եւ անոնց ժամանակագրութեան: Կենսադիրը կը ներկայացնէ Հեթում Բ. Թագաւորը յարգանքով լի հանդէպ Գէորգ վարդապետին, ունկնդրող անոր ամէն մէկ խօսքին եւ գործադրող, որով անհնարիններն ալ կը դառնան հնարաւոր: Յանկարծ ասպարէզ կը մտնէ Գրիգոր Անաւարդեցի, որ իր ճարտարութեամբ կը յաջողի գրաւել Թագաւորին սիրտը եւ իրեն դադափարակից ընել. այսպէս դեն է որ գործել կը սկսի: Խլրտումը կը սկսի 1291-2ի Զատիկի տօնին առթիւ. բայց սաստկութեամբ կը յայտնուի Գրիգորի կաթողիկոս ընտրուելէն յետոյ: Եկեղեցական դոմարում տեղի կ'ունենայ եւ Գրիգոր կը խօսի ատենին մէջ, ապահովապէս իր միութենական ծրագիրներու մասին: Գէորգ վարդապետ՝ իբր ընդդիմադիր խումբին ներկայացուցիչ՝ խօսք առնելով կը յանդիմանէ զինքը իբր հայ եկեղեցւոյ սուրբ Հայրերու ուղիղ ճամբէն չեղող մը, եւ թէ իր այս շեղումին համար Աստուած կրնայ պատժել զինքը²⁶: Եւ իրապէս նոյն դիշերը Անաւարդեցի կ'ենթարկուի աստուածային պատիժին, մարմինը ամբողջապէս անդամալոյծ կը դառնայ՝ հիւանդութեան բոլոր չարաչար հետեւանքներով: Միեւնոյն դիշերը քահանայ մըն ալ տեսիլքով կը տեղեկանայ թէ Գրիգոր իր յանցանքներուն համար է որ կը պատժուի Աստուծոյ կողմէն²⁷: Երկու տարի այդ տառապազին վիճակի մէջ ցաւատանջ ապրելէ յետոյ կը վախճանի: Որքան պատմական ստուգութիւն ունին արդեօք այս նկարագրուած դէպքերը, դժուարին է ճշտելը, սակայն ժամանակագրական տուեալներով Գրի-

25. Ամդ, էջ 423: - 26. Ամդ, էջ 429: - 27. Ամդ, էջ 430:

գոր Անաւարդեցի վախճանած է 1307ին, իսկ Գէորգ Սկեւռայի 1301-1302ին: Գրիգորի հիւանդութիւնը պէտք է սկսած ըլլայ 1305ին, երբ գոնէ երեք տարիէ ի վեր Գէորգ մեռած էր: Այս պատճառով ընդարձակ կենսադրութեան նկարագրած եւ յիշատակած բազմաթիւ եղելութեանց եւ կէտերու նկատմամբ քննասէր ընթերցող մը բռնադատուած է զոյճ եւ վերապահ վերաբերում մը ունենալ: Տեսիլներու եւ երազներու միջամտութիւնն ալ կ'աւելցնէ այս կասկածի տրամադրութիւնը: Կենսադրութեան հեղինակն ալ այս երազողներէն մէկն է (էջ 430), ինչպէս ինք կը խոստովանի: Այս բոլորին առջեւ ընթերցողին մերձեցումը այդ կենսադրութեան աննպաստ է, տեսնելով հանդերձ գրողին մէջ գրական ու լեզուական առաւելութիւններ: Սակայն պէտք է մոռնալ որ կը գտնուինք միջին դարու մէջ, հակասութեանց դարաշրջան մը: Ժամանակներն ալ նպաստամատոյց չեղան. օտար ու այլակրօն թշնամիներու սպառնալիքին հետ չպակսեցան դժբախտաբար երկրին իշխանադուներու կողմէ ընտանեկան պայքարները, տիրապետութեան փափաքէն մղուած ու վատթէյն իրարու դաւելով: Ասոնց միացան նաեւ կրօնական անհասկացողութիւններ ալ, որոնք յուզեցին հոգիները եւ անկարելի է որ ազդած չըլլան յոռեպէս մըտքերու եւ հոգիներու վրայ: Գէորգ վարդապետն ալ անշուշտ տառապած է այս տխուր կացութենէն. տազնապալից վիճակները միշտ կը ճնշեն հոգիներու վրայ ու կը սպառեն. որով դիւրին է ըմբռնել թէ ինչպէս տակաւին առոյգ հասակի մէջ, գուցէ դեռ վաթսուներ չթեւակոխած, կ'ընկճուի մահուան հարուածէն 20 (1301-2) թուականի Յունուարի մէջ:

Ի՞նչ պէտք է մտածել Գէորգ Սկեւռայի գրական վաստակի մասին:

Ժ. Դարուն մեր եկեղեցական գրականութեան համար կը սկըզբնաւորէ տեսակ մը հիւմանիզմի եւ ժողովրդականացումի շրջան, որ կը տեսէ մինչեւ ԺԵ. դար: Ժամանակի վարդապետները սովորաբար կը զբաղին եկեղեցւոյ նախկին մեծանուն վարդապետներու դասական դործերը քննարկելու, վերլուծելու, անոնց գրութեան պատճառները հետազոտելու աշխատանքով. այսպէս կ'ունենանք Աստուածաշունչի գրքերուն նկատմամբ նախկին մեկնողական գրքերէն քաղուածոյ մասերով յօդուած խմբագիր մեկնութիւններ. Լուծմունք եւ Պատմառք, Ճառակաւ եւ Նաւրք կոչուած գրքերու՝ իմաստասիրական կամ բնագիտական պարունակութեամբ: Միաժամանակ զանց չեն ընել քերականական ու զրչադրական արհեստի կրթութիւնները. քննարկումի, վերլուծումի եւ պարզացումի աշխատանք մըն է, որ կարծես աւելի նպատակ ունի ուսումնարաններուն ծառայել՝ քան թէ բուն գիտական աշխատանք եւ նոր դադափար-յղացքներու փնտռումը կատարել: Ստեղծագործող գրականութիւնը չպակսեցաւ, բայց գլխաւոր-

բազմաբանությունները մեջ, որ այդ դարաշրջանին մեծապես ծաղկեցաւ: Սակայն եկեղեցական դասին համար տիրող դրաղումը աւելի բանասիրական եղաւ: Միաժամանակ քննութեան առնուեցան նաեւ Աստուածաշունչի դրքերուն գրութեան պատճառները եւ նպատակը, ու յօրինեցին նախադրութիւններ եւ գլխակարգութիւններ անոնց համար, անշուշտ օգտագործելով այն ամէնը որ կատարուած էր այս նիւթին մէջ նաեւ Յոյներէ եւ Ասորիներէ:

Այս աշխատանքին մէջ հաւասարապէս ցոյց տուին նոյնքան կենսունակութիւն թէ արեւելեան Հայաստանի վանքերը՝ Հաղբատ, Սանահին, Տաթեւ եւն., եւ թէ Կիլիկիայի նորակառոյց մենաստանները՝ Սիւեւա, Դրաղարկ, Հոռմկլայ եւն.: Գուցէ նոյն ժամանակները ծաղող վարդապետական ինչ ինչ հարցեր ա'լ աւելի մղեցին լծուելու այդ դործին: Կ'երեւի որ Կիլիկիոյ մենաստանները որքան նորահաստատ, բայց լաւ կազմակերպուած էին, մանաւանդ առաջին շրջանին. Ներսէս Շնորհալի ու Ներսէս Լամբրոնացի Հոռմկլայի ու Սիւեւայի մէջ, եկեղեցական գրականութեան պերճաշուք կեդրոններ ստեղծած են: Ասոր կրնայ նպաստած ըլլալ Կիլիկիոյ մերձաւորութիւնը Յոյներուն եւ Ասորիներուն: Իրապէս Վարդան Հաղբատացի, նոյնանուն վանքին անուանի վարդապետներէն, կը հարկադրուի երթալ Կիլիկիա, Շնորհալիի գիտական առաւելութիւններէն օգտուելու համար. այդ առիթով կը խնդրէ Շնորհալիէ Դաւթի Բարձրացուցէ՛ք ճառին պատճառը եւ մեկնութիւնը. ինչ որ կը կատարէ Հայրապետը²⁸: Նըմանապէս Դաւթ վարդապետ, հաւանօրէն Քորայրեցին, աշակերտ Վարդանի, ինքն ալ կ'ողբուորի Կիլիկիա նոյն գիտումով ու կը վկայէ այս ուղեւորութեանը, ինչպէս իր ուսուցիչին՝ Վարդանի, Աստուածաբանի ճառերուն իր պատճառներու քննարկման վերջաբանին մէջ²⁹:

Ահա այսպիսի ժամանակ մը ու այսպիսի գրական միջավայրի մը մէջ է որ կը յայտնուի Գէորգ Սիւեւացիի ու կը դործէ: Ժամանակակիցները դժուար են զինքը նաեւ գրական տեսակէտով, անուանած են Պաւստիկոս, Մեծ հոռետոյ, Լուսաբան Բարձրացեալ. Մովսէս Երզնէացի կը նկատէ զինքը անհամեմատ յարդեան ժամանակա, արեւմտային արեգակն: Այլիչան ալ մեծ համակրանքով կը խօսի իր վրայ Սիւեւանի մէջ: Գէորգի տաղաչափուած գրութիւններն ալ բաղդատուած են Հռոմեականներուն հետ, բայց այս բացատրութիւնը կը համարիմ առնուած է Գէորգէ, որ 1267ին գրելով ոտանաւոր յիշատակարան մը, կ'ըսէ «ի չափ երկոտասանից պարզեալ ոտից հոմերական արուեստի սուղ ինչ բան»³⁰. այսինքն տաղաչափուած գրութիւնը կը

կոչէ հոմերական: Դժբախտաբար Գէորգի գրական գործերէն տալաւին ոչինչ հրատարակուած է, որպէսզի կարելի ըլլար որոշ գաղափար մը կազմել անոնց արժէքին մասին: Պէտք է ընդգծել թէ փայլուն եւ թափանցող միտք մըն է, ընդգրկող ամէն բան, հմուտ՝ եկեղեցական գիտութիւններու ծաւալին, եւ նկատուած է դարուն ամէնէն զարգացած միտքերէն. իր գրած Քարոզ-գանձերը իր կենդանութեան անցած են Գանձարաններու մէջ: Ահաւասիկ ընդհանուր պատկերը այն բոլոր հեղինակութեանց, որ հասած են մեղի, սկսելով մեծ ծաւալ ունեցողներէն:

ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ԳՈՐԾՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ. խմբագրուած 1289էն առաջ: «Առ խնդրողն համառօտիս Տէր Յովհաննէս Արքայեղբայր եւ եպիսկոպոս նահանգաց աստուածապահ զղեկին Մաւրեանի եւ մասին ինչ Բարձրերդոյ եւ նոյն տեսուչ հռչակելի Ս. Ուխտին Գոռնրոյ եւ առ հանդերձեալսն մատենիս»³¹: Համառօտ խմբագրութիւն մըն է քաղելով հատուածներ ուրիշ մեկնիչներէ, մեծ չափով Ոսկերեանէ ու Եփրեմէ, եւ նուազ չափով Նազիանզացիէ, Նիսացիէ, Շնորհալիէ, Լամբրոնացիէ, Կիրակոսէ, ազուցանելով այս մասերը իրարու՝ առանց սակայն գրութեան իմաստը կտրատում ունենալու եւ ջանալով պահել նիւթի միութիւնը. այսպէս ուղղուած է աւելի զիւրմբունքի ու համառօտ մեկնութիւն մը կազմել: Լուսանցքներու վրայ նշանակուած են անունները այն հեղինակներուն, որոնցմէ առնուած են այդ հատուածները: Ամբողջութիւնը կը բաղկանայ յիսուներհինգ գլուխներէ, ու ամէն մէկ գլուխ կը վերջանայ բարոյականով մը, այսինքն 15-20 տողոց յորդորակով: Որքան որ խմբագրական դործ է, բայց ցոյց կու տայ յօրինողին մէջ լիովին ծանօթութիւն գրքի նիւթին եւ միաժամանակ հայրախօսական հմտութիւն:

ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ. հաւանօրէն խմբագրուած 1290-1ին: «Համառօտ ժողովումն մեկնութեան Ս. Մարգարէին Եսայեայ ի լուսաւոր մեկնաց՝ Ս. Հօրն Եփրեմայ, Յովհաննու Ոսկերեանի, Կիւրղի Աղեքսանդրու հայրապետին, հրամանաւ Տեառն Հայոց Հեթմոյ, Գէորգեայ վարդապետի արարեալ»³²: Յիշա-

31. Մեկնութիւն Գործոց Առաքելոց, խմբագիր արարեալ Նախեալ, Վենետիկ, 1839: Վերջաւորութեան գրուած է Գրիգորիս Կաթողիկոսի (1065-1105) Յիշատակաբանը:

32. ՊՕՂԱՐԵԱՆ Ն., Մայր Յուցակ, Բ., էջ 269: Հասած է ձեռագիր մը գրուած Սիւեւանէ, որ Ձեռագրին 378 էջի ստորին լուսանցքի վրայ կը գրէ. «Ով եղբայր Սիմէոն, պիղծ գիր գրեցիր, ապա սիրուն ես թաթխել. թուին Ձեռն Դեկտ. Ժէ» (1292 Դեկտ. 17): Իսկ 276 էջին մէջ, խօսելով իր գրին վրայ, կ'ըսէ թէ աճապարելուն պատճառով այնքան կոկիկ չէ կրցած գրել, ու կ'աւելցնէ. «Թէեւ գիրս

28. ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., Մատենագրական հետազոտութիւններ, Հտ. Ա., Վիեննա, էջ 56-60, 67-69:

29. ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., Աճ, էջ 57-59:

30. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիւեւան, էջ 102:

տակուածներէն զատ առնուած են հատուածներ Նաղիւնդացիէ, Աթանասէ, Եւաղիէ, Սարգիսէ. այս Սարգիսը ապահովաբար Կուսի կոչուածն է, որ 1178ին կը լրացնէ Ղուկասու եւ Յովհաննու աւետարաններու մեկնութիւնները Խորանշատի մէջ: Գուցէ Գէորգ տեսած ըլլայ նաեւ Եսայեայ Մեկնութիւնը Դաւիթ վարդապետի մը, որ հաւանորէն Քորայրեցիին է, ինչպէս կը խորհի Հ. Ակինեան³³:

Մեկնութիւնը կը բաղկանայ երկու հատորներէ. առաջինը կը վերջանայ երեսներորդ դուռին հինգերորդ համարով. յաջորդ հատորը կը սկսի Տեսիլ չորստանեաց յանապատի մասով: Եսայեայ գրքին այս մեկնութիւնը խմբագրութիւն մըն է կատարուած Գէորգի կողմէ, հետեւելով Ոսկերեանի գրած մեկնութեան գիծին, բայց ամփոփելով ու պարզելով բոլոր ատաղձը, եւ ուր որ կարեւոր կամ յարմար նկատած է, առած է վերոյիշեալ մեկնիչներէ մասեր եւ ընդելուծած հիւստածքին. յետոյ, պահանջին համաձայն, իր կողմէ ալ աւելցուցած է պարզարանութիւններ, աւելի բացորոշելու իմաստը: Ինչպէս Ոսկերեան իր գրքին մէջ ակնարկներ ունի կամ նկարագրութիւններ իր դարու ժողովուրդին կենցաղին, սովորոյթներուն, աւելորդապաշտութիւններուն, նմանապէս Գէորգ ալ իր ժամանակի ժողովուրդի այդ նմանահաւատ կանխադուշակութեանց ուշադրութիւն կը դարձնէ: Լեզուն՝ չունենալով հանդերձ Ոսկերեանի գրքի հայերէնի մաքրութիւնը եւ կենսաւետութիւնը, հաճելի լեզու մըն է:

«ԻՐՈՒԱՏ Ի Ս. ԱՌԱՔԵԱԼՆ ԵՒ ԱԻԵՏԱՐԱՆԻՉՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ. ի պատկառելի խնդրոյ Յովհաննու եպիսկոպոսի, եղբաւր բարեպաշտ արքային Հայոց (Հեթմոյ), ի թուականին ԶԼԲ (1283), Գէորգեայ մեծի եւ յոգնալոյս վարդապետի ասացեալ Սկեռացոյ. (սկզբ.) Պայծառ եւ խնդարի է մեզ աւուրս այս»³⁴: (Շուրջ երեսուն թուղթ, միջին ծաւալով):

«Գէորգայ վարդապետի ասացեալ վասն սուրբ Հաղորդութեան,

յուրի է, բայց օրինակիս ընտրութիւնն մեծարգոյ է»: Ապահով Գէորգ վարդապետի գրած օրինակի վրայէն կատարած է ընդօրինակութիւնը: Հեթում Բ. դահ բարձրացած է 1289ին, եւ մեկնութիւնը յօրինուած է թաղաւոր Հեթումի յանձնարարութեամբ: Միեւնոյն Սիմէոնը գրած է նաեւ Գանձարան մը, որ առանց թուականի է թուղթերու անկումով: Գանձարանին մէջ զետեղած է տասնեակ մը քառյակներ Գէորգէն, ու անոնցմէ մէկուն յիշատակարանին մէջ կը խնդրէ. «Գրարեհամբաւ վարդապետն Գէորգ Սկեռացի, որ ոգեաց զսա, բարի յիշման արժանի արարէք, ով սուրբ երկեցողք, ընդ նմին եւ զմեզաւոր հոգս զՍիմէոն»: Ինքզինքը հոգ Սիմէոն կ'որակէ նաեւ Եսայեայ Մեկնութիւնը ընդօրինակող Սիմէոնը: (Տես Յուցակ Զեռագրաց Կիպրոսի, թիւ 59):

33. ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., Մատենագրական Հետազոտ. Ա., էջ 50:

34. ՊՕՂԱՐԵԱՆ Ն., Մայր Յուցակ, Ա., էջ 306:

ի խնդրոյ Յովհաննիսի քահանայի. (սկզբ.) Արեամբն Քրիստոսի փրկեալ եղբարք իմ»: (Շուրջ վեց թուղթ):

Նորին վասն սուրբ Հաղորդութեան. (այլ կարճ եթէ պիտոյ իցէ). (սկզբ.) «Լուարուք Քրիստոսի Աստուծոյ փրկեալ»³⁵:

ԽՐԱՏ ԳՐԶՈՒԹԵԱՆ. «Խնդրեալ նախ Կոստանդին գրչի եւ ապա Ստեփանոսի Գոյներ երիցանց»: Յետ ներկայացնելու Արիստակէսի Յաղագս գրչութեան գիրքը, Գէորգ նախ կը լրացնէ պակաս կէտեր քերականական հարցերու շուրջ, ապա կը խօսի «Յաղագս վանկի եւ փաղառութեանց եւ հեղի եւ հասարակ շաղաշարաց եւ բանի... խորատք կէտիւք բաժանման հեղիցն, երեսուն եւ վեց գիրս բովանդակ նիւթ է խաւից»: Յօրինուած է 1297է առաջ, եւ կարեւոր գիրք մըն է ձեռագիր ընդօրինակելու արուեստին համար: Շատեր իրեն կը դիմէին այս արուեստին մէջ զարգանալու համար, ու ինքը իբր գրիչ մեծ համբաւ կը վայելէր³⁶:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ԳՐՈՅ. Գէորգ Սկեռացիի կ'ընծայուն ասոնք ալ, որ ձեռագիրներու մէջ կը ներկայանան իբր «Համարք գլխոց եւ ցանկք եւ նախարութիւնք աստուածային տառից», հաւանորէն օգտագործելով յունական բնագիրները. անշուշտ տեսած ալ պիտի ըլլայ 1214-1221 տարիներու Սանահին վանքի առաջնորդ Արասու որդի Գրիգոր վարդապետի աշխատութիւնը՝ Պատմառք լայն եւ նուրբ գրեանց հատորը, որու ծանօթ ըլլալը կը ցուցնէ արդէն իր ուսուցչապետը՝ Վարդան պատմիչը, Հ. Ն. Ակինեանի տեսութեամբ³⁷:

Հ. Բ. Սարգիսեան քննելով Վենետիկի Մատենադարանի թիւ Ե. Աստուածաշունչ գիրքը, կը համարի որ առաջինն ըլլայ ճոխացած Գէորգեան նախագրութիւններով. ասոնք փոխանակ իւրաքանչիւր գրքին սկզբնաւորութիւն ըլլալու, խմբովին գրուած են այդ Աստուածաշունչին սկիզբը: Իսկ Յովհաննու Յայտնութեան նախագրութեան կցուած է գրչին կողմէ հետեւեալը. «Տէր Յիսուս Քրիստոս Աստուած, զթա, ողորմեա Գէորգ վարդապետին, որ զնախագրութիւններս եւ զգլխինս ամէն հին կտակարանացս շինել է»³⁸: Նմանապէս Եւթաղի

35. ԱԿԻՆԵԱՆ եւ ՈՍԿԵԱՆ, Յուցակ Հայերէն Զեռագրաց Զմմառի վանքի մատենագրանին, Վիեննա, 1971, Բ., էջ 17:

36. ՊՕՂԱՐԵԱՆ Ն., Մայր Յուցակ, Դ., էջ 531: Գէորգեայ վարդապետի արարեալ ի խնդրոյ Ստեփանոսի մականուն Գոյներիցանց: «Անպարտապ անձամբ ձեռնարկեցի ի գրել» եւն.: Գրողը թովմաս կը խնդրէ յիշել «ի Քրիստոս զիս եւ զծննաւսն իմ, եւ զհոգեւոր հայրն իմ զԳէորգ վարդապետն, զարարաւ խորատուցս... եւ զաւրինակին շնորհաւոր Ստեփանոս Գոյներիցանց, անհաս գրիչ»:

37. ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., Մատենագրական Հետազոտ. Ա., էջ 64:

38. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ., Մայր Յուցակ Զեռագրաց, Ա., էջ 50:

աղերսէն յետոյ, ձեռագրի 677ա էջին, գրիչը կը խնդրէ Առաքելներէն որ բանախօսեն Յիսուսի «վասն Գէորգեա վարդապետի, որ զԳործքս գրեաց»: Սարգիսեան այս բացատրութենէն կը հետեւցնէ որ Գէորգ վարդապետն ըլլայ նաեւ ընդօրինակողը այս մասին, եւ տարբերութիւնը կը նշմարէ Աստուածաշունչի գրքերու գրին եւ նախադրութեանց գրին մէջ: Այսպէս Գէորգ Սկեւոացի, եթէ նոյն իսկ առաջինը չըլլայ այս մարդին մէջ, սակայն մեծապէս նպաստած պիտի ըլլայ այս գործին. այս պատճառով իր անունն ալ ստէպ կը յիշատակուի ձեռագիրներու մէջ: Անշուշտ տարտամ հաւաստումներ են ու կը զգացուի հարկը լուրջ եւ բազմակողմանի ուսումնասիրութեան մը մասնագէտներու կողմէ, կարենալու համար աւելի ստոյգ եւ ճշգրիտ տուեալներով հասնիլ որոշ տեսութեան, կարգալով նաեւ ինչ որ գրուած են 8, 19, 150 էջերուն մէջ նոյն Յուսեակին: Թիւ Ա. Աստուածաշունչին ալ արժէքը կ'ընծայուի «վասն աղնիւ աւրինակիս» զոր Ս. եւ երանեալ վարդապետին Գէորգեայ Սկեւոացոյ ձեռացն շարահիւսեալ էին» (էջ 19): Տեսնել նաեւ Անկիւրիոյ Կարմիր Վանուց ձեռագրաց Յուսեակին մէջ, ինչ որ Թիւ 45 Աստուածաշունչի համար կը գրէ Բարգէն Աթոռակից Կաթողիկոս:

ՏՈՆԱՑՈՅՑ – ՃԱՇՈՑ – ԱԻԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ. Թէ Գէորգ վարդապետ կատարած է ինչ ինչ կարգադրութիւններ նկատմամբ Տօնացոյցին, եւ որով նաեւ ճաշոցին մէջ յիշատակուած տօներուն եւ ընթերցումներուն՝ ստոյգ կ'երեւի, ձեռագիրներ կան որ յայտնապէս կը հաւաստեն, առանց սակայն ճշդելու կարգադրութիւններու էութիւնը:

1421 Յաղեթ գիւղի մէջ Կարապետ արեղայէ գրուած ճաշոցի մը մէջ կ'ըսուի. «Եւ վասն տօնիցս կարգելոցն մի ոք յերկւասցի, զի կարգեալ է զայս սրբոց Հարանցն եւ սուրբ վարդապետին Գէորգեայ, ի սուրբ Ուխտն որ կոչի Դրազարկ, ի սահմանս Կիւղիկեայ յերկրին Սըսայ»³⁹: Նմանապէս ուրիշ ձեռագրի մը մէջ, որ Տօնացոյց – Աւետարանացոյց մասեր ալ ունի, կը կարդանք. «Բովանդակ տարոյն կարգեալ է Գէորգ վարդապետէ». եւ Յովհաննէս գրիչ ընդօրինակած է «ի խնդրոյ եղբոր Մարտիրոսի վանական քահանայի ի Թուակահնիս Հայոց Չճի՛՛ (1279) ի մայրաքաղաքիս Սիս ընդ հովանեաւ Հրեշտակապետին»⁴⁰: Անթուական ձեռագիր մըն ալ, որ կը սկսի «Որտեք զանազան շարականաց քա(ղուած)ոց, թէ որպէս պարտ է ասել ըստ (խորհ)ըրդեան աւուր պատճառն» (էջ ձեռագրին 1-20), ըստածներուն ճշդութիւնը կը հաստատէ Գէորգ Լամբրոնցոյ հեղինակու-

39. ԱՃԱՌԵԱՆ Հ., Ցուցակ Հայերէն Զեռագրաց Թարգմանի, Վիեննա, 1910, էջ 113:
40. ՊՕՂԱՐԵԱՆ Ն., Մայր Ցուցակ, Ե., էջ 560:

թեամբ⁴¹: Ասոր նման պէտք է ըլլայ նաեւ նոյն Ցուցակին Թիւ 231 Տօնացոյց – Աւետարանացոյցը, որ շատ փճացած վիճակի մէջ հասած է մեղի: Իսկ նոյն ցուցակի Թիւ 162 Տարեգիրք – ճաշոցի մէջ կը շեշտուին Գէորգ վարդապետի կարգադրութիւնները:

Աւելի բացայայտ վկայութիւն մը կու գայ՝ լուսաւորելու իրականութիւնը, իր աշակերտէն՝ Ստեփանոս Գոյներ Երիցանցէ, իրմէ գրուած Տօնացոյցի մը մէջ: Ստեփանոս Սուրբաթի կարգի մասին, կ'ըսէ. չկարծէք թէ կը սխալիմ այս խրատները գրելով Աւետարանին ընթերցման եւ շարականը երգելու ժամանակներու մասին, «այլ ի մեր սուրբ եւ լուսաւոր վարդապետէն, իմ լուեալ մեծ հոգաբարձութեամբ ի Ս. Գէորգեա Լամբրոնցոյ»: Յաջորդաբար կ'աւելցնէ. «Գէորգեայ Որտն այդ է, զոր վերոյ գրեցաքն»⁴²: Ստեփանոս Գոյներ Երիցանցի մահուան տարին յայտնի չէ, բայց 1314ին դեռ ողջ էր ու կը գրէ ծիսական գիրքերու ժողովածոյ մը Կիպրոսի մէջ, ուր ապաստանած էր 1300ին, Կիլիկիոյ աղէտներէն փախչելով, «Կիպրոսի Սենեջալ իշխանուհի Տիկին Ալիծի» համար⁴³:

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՆԵՄԵՍԻՈՍԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ԵՄԵՍԱՑԻՈՑ ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑ⁴⁴ գրքին. տպագրուած վեցերորդ: «Լուծմունք»ները կը գտնուին էջերու ստորին լուսանցքներուն վրայ եւ իմաստը բացատրող եւ լուսաբանող համառօտ լուծմունքներ են, մերթ լեզուական նկատառումներով:

Ձեռագիրներու մէջ յիշատակուած են նաեւ ԼՈՒԾՄՈՒՆՔ ՆԱՐԵԿԱՅ⁴⁵, որոնց կազմի մասին որոշ գաղափար չունինք:

ԳԵՈՐԳԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՍՆ ԿԱՆՈՒԽ ԵՒ ԱՆԱԳԱՆ ԼԻՆԵԼՈՑ ԶԱՏԿԻՆ⁴⁶:

ՃԱՌ ՎԱՍՆ ԶԱՏԿԻ⁴⁷. յայտնի չէ թէ այս երկուքը նոյն նիւթն ունենան իբր պարունակութիւն. խորագրէն դատելով, երկրորդը աւելի քարոզ ըլլալու գաղափարը կը թելադրէ:

41. ԲԱՐԳԷՆ ԱՌՈՒԱԿԻՑ ԿՊՂ., Ցուցակ Զեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 1184:

42. ԹՕՓՃԵԱՆ Յ., Ցուցակ Զեռագրաց Արմաշի, էջ 394:

43. ՊՕՂԱՐԵԱՆ Ն., Մայր Ցուցակ, Բ., էջ 61:

44. ՆԵՄԵՍԻՈՍԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ԵՄԵՍԱՑԻՈՑ Յաղագս Բնութեան մարդոյ, Վեներա, 1889:

45. Ցուցակ Զեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երեւան, 1965, Ա., Թիւ 3710, 1152, 1579 ևւն.:

46. Անդ, Թիւ 1973:

47. Անդ, Թիւ 701, 1525, 2001, ևւն.:

ԳԵՈՐԳ ՍԿԵՒԻԱՅՈՅ ՎԱՍՆ ԴԱԽԱՆՈՒԹԵԱՆ⁴⁸: ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ⁴⁹. Հաւանորէն Գորգը Գէորգ պիտի ըլլայ: Վենետիկ Ձեռագրաց Յուշակը կազմողին համաձայն այս երկրորդը իր պարունակութեամբ Եփրեմի, Աթանասի, Եւագրի անուններով հասած Խոստովանութեան հետ նոյնն է, բայց աղաւաղ լեզուով յօ-րինուած:

ԳԵՈՐԳԱՅ ՍԿԵՐԱՅՈՅ Ի ԽՐԱՏ ՎԱՆԱԿԱՆԱՅ⁵⁰:

ՊԱՏՃԱՌ ԶԱՌԻՆ ԳԵՈՐԳԱՅ⁵¹, շատ անորոշ խորագիր մը:

ՅԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ, ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍՍՅԵԱԼ⁵²:

ԳԵՈՐԳԵԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՔԱՐՈՋ Ի ԲԱՆՆ ՈՐ ԱՍԷ. Մտցուի ի յարկս նորա եւ երկրպագումի ի տեղւոյ:

ՆՈՐԻՆ ՔԱՐՈՋ ՄԱՀՈՒ Ի ԲԱՆՆ. Ահա չափով եղիք գաւուրս:

ՔԱՐՈՋ ՄԱՀՈՒ Ի ԲԱՆՆ. Պատուական է առաջի Տեառն:

ՆՈՐԻՆ ՔԱՐՈՋ ԵՐԿՐՈՐԴ ՅԱԻՈՒՐՆ ՈՐ ԿՈՉԻ ԱՅԳԵԼՈՅ⁵³: Հաւանորէն յաջորդներն ալ Գէորգի ըլլան, մինչեւ ձեռագրին 69 էջը:

ԳԵՈՐԳԵԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՆ Ի ԲԵՐԱՆՈՅ ՄԵՌԵԼՈՅ. Գոչեմ առ քեզ ողբերգական⁵⁴:

ՏԱՌԱՊԵԱԼ ԱՆՁԻՆՆ ԳԵՈՐԳԵԱ ՍԿԵՒԻԱՅՈՅ ԲԱՆ ԽՐԱՏՈՒ Ի ԽՆԴՐՈՅ ԱՌԻԻԾՈՅ ՊԱՏԱՆԵԿԻ. Բանն վասն որոյ խնդրեցեր յինէն⁵⁵:

Հուսկ յիշատակենք իր քերթողական գործը, որ կը ներկայանայ ձեռագիր Գանձարաններու կամ Տաղարաններու մէջ իբր Բարոզ, կամ Գանձ եւ կամ Տաղ, ձեռագիրներու համաձայն: Նկատել որ սովորաբար Գանձին կը հետեւի Մեղեդին, ստոր ալ Տաղը, եւ որու վերջին մասը կը կազմէ Յորդորակ կոչուածը. սակայն այս դասական բաժանումը պարտաւորիչ չէ եղած:

Գէորգին առաջին ոտանաւոր գրութիւններէն եղած է այն տա-

48. Անդ, Թիւ 3854:

49. Յուշակ Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Բ, Թիւ. 8874: ՍԱՐ-ԳԻՍԵԱՆ Հ. Բ., Մայր Յուշակ, Բ, էջ 541:

50. Յուշակ Ձեռ. Մաշտոցի անուան Մատենադարանի, Բ, Թիւ 10182:

51. Անդ, Ա, Թիւ 3771:

52. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ., Մայր Յուշակ, Բ., էջ 1221:

53. Չորս քարոզներուն համար տեսնել. ԲԱՐԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ, Յուշակ Ձեռագրաց Անկիւրիոյ, էջ 545:

54. ՔԵՇԻՇԵԱՆ Մ. Վ., Յուշակ Ձեռագրաց Զմմառի, Ա. հտ., Վիեննա, 1964, էջ 224:

55. ՊՕՎԱՐԵԱՆ Ն., Մայր Յուշակ, Ե., էջ 129:

ղաչափուած գրութիւնը, որ իբր յուշագրութիւն աղուցած է 1267ի ընդօրինակած Տօնապատմանի Յիշատակարանին⁵⁶: Ասոր գուցէ յա-ջորդած ըլլայ Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի Ձեռագրաց Յուշակի Թիւ 1721ը:

Գէորգայ Սկեւրացոյ ոտանաւոր վասն նորակիրք մանկանց:

Քարոզ ծննդի եւքն աւուրն, ի խնդրոյ Յովհաննու եկեղեցապանի.

Գերագոյն ճառագայթ:

Քարոզ ուքերորդ աւուրն, ի խնդրոյ Յովհաննու եկեղեցապանի.

Գերագոյն բնաւից անճառ⁵⁷:

Քարոզ Վարագայ Խաչին, ի խնդրոյ Տէր Սիմէոնի Առաջնորդի մեծի Ուխտին Սկեւռայ. Գաւազան ուժոյ եւ ցուպ զօրութեան:

Քարոզ Սրբոց Աւետարանչաց, ի խնդրոյ Մարկոս Վարդապետի.

Գեղապանձ զարդիւք պաճուճեալ:

Գանձ Յովհաննու Ոսկեքերանի, ասացեալ Գէորգայ Վարդապետի ի խնդրոյ Հեքմոյ արքայի Հայոց. Գոյով սքանչելի լոյս քում հան-ճարոյ:

Քարոզ Սրբոց Թարգմանչաց. Գետոցն Աստուծոյ ճոխ ի քեզ գը-նացիւք⁵⁸:

Քարոզ Ս. Թէոդորոսի Զօրավարին. Գեղեցիկ վկայ զինաւոր ըս-քանչելի⁵⁹:

Քարոզ Դաւթի Մարգարէի եւ Յակոբայ Առաքելոյն. Գերահրաշ տօնին խորհրդոյ:

Գէորգեայ Վարդապետի ոգեալ քարոզ Ս. Բարսղի, ի խնդրոյ Թորոս Բանաւայի Տարմնեցոյ. Գերագոյն բնաւից արարչազործաւ⁶⁰:

Քարոզ Սրբոյն Սարգսի Զօրավարի Գէորգեայ Վարդապետի ո-գեալ. Գլելոցն ի յերկինս անդրանկաց դասուց:

Քարոզ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, Գէորգեայ Վար-դապետի ոգեալ. Գերահրաշ ցնծութեամբ բերկրեալ մանկունք Սիոնի:

Քարոզ Նիկիոյ Սուրբ Ժողովոյն, Գէորգեայ Վարդապետի, ի խնդրոյ Տէր Սիմէոնի եւ Առաջնորդի Սկեւռայի. Գնդին գովելոյ գու-մարեալ խմբին⁶¹:

Ի Գէորգեայ Սկեւռացոյ տաղ Յովհաննու Ոսկեքերանի. Ի Կոս-տանդինու քաղաքն արեգակն անմուտ բազմեցար⁶²:

56. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիւսեան, էջ 102, Ծանօթութեան մէջ:

57. Այս երկուքին համար տեսնել. ՊՕՎԱՐԵԱՆ Ն., Մայր Յուշակ, Ա., էջ 628-9:

58. Այս չորսը տեսնել. ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., Յուշակ Ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, Վիեննա, 1961, էջ 107:

59. Անդ, էջ 106:

60. Անդ, էջ 107:

61. Անդ, էջ 106:

62. ԹՕՓՃԵԱՆ Յ., Յուշակ Ձեռագրաց Արմաշի, էջ 441:



Գէորգ Սկեւռացիէ յօրինուած այս Քարոզ-Գանձերը, սովորաբար տուններու առաջին տողերու սկզբնատառերով կը կազմեն Գէորգեա քան:

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ԳԵՈՐԳ ՍԿԵՒՌԵԱՅԻ. Ալիշան Սիսուանի մէջ նկատողութեան առած է նաեւ Գէորգի կատարած աշխատանքը նըկատմամբ մեր Շարականներուն⁶³: Բաւական թուով Շարակնոցներու մէջ, մեծ մասով 1500է վերջ ընդօրինակուած, կը կարգանք թէ այդ Շարակնոցը գրուած է ի լաւ եւ յընտիւր օրինակէ Սըսոյ առաջի վարժապետին եւ անուն խոհի որքորջելոյ, եւ կամ ուրիշի մը մէջ՝ գըրուած 1346ին ի գաւառին խարքերդոյ ի վանքն խոհի ԱՅ. Իսկ ուրիշ մը կ'ընդօրինակուի 1554ին ի լաւ եւ յընտիւր օրինակէ խոհի Ն. Գարձաւ ուրիշ մըն ալ գրուած 1666ին Գիւմրիւշխանէ՝ ի լաւ եւ յընտիւր յօրինակէ որ է խոհի: Անուններու այս տարբեր զանազանակներով հանդերձ, հարկաւոր է ընդունիլ որ անոնք ծագած են միեւնոյն մայր տիպէն, որ կ'ընծայուի խոհի, խոհի, խոհի անձի մը, եւ որ յետոյ Գէորգ Վարդապետ, Առաքել Սիւնեցիի բառով, ուղղած է, ու այդպէս ընդհանրացած են անոր օրինակները:

Ի՞նչ եղած է արդեօք այս երկու Շարակնոցը վերատեսնողներու կատարած աշխատանքը. ասոր նկատմամբ զազաւար մը ունենալու համար, լաւագոյն կը համարիմ մէջ բերել ինքնին Առաքել Սիւնեցիի գրածը, Դաւիթ Անյաղթի Սահմանաց գրքին իր լուծմունքներուն մէջ: Խօսելով ոլորակի մասին, այսինքն է Նոր Հայկազեան Բառարանի համաձայն «ուժգնութիւն հնչման յեղեկս ձայնի կամ յառողանութեան», կը գրէ. «Տասն կերպիւ ասի ոլորակ. նախ զի բանքն եւ ոտն եւ ձայնն եւ շունչն եւ եղանակն ի միասին ոլորեալ յարմարեցին. միջակ լիցի ձայնն, ոչ քան զկարն աւելի եւ ոչ նուազ, այլ միջակ. զուարճ, զի հնար լիցի քաղցրաձայն երգել եւ մի՛ տգեղ. կենդանի լիցի երգն, այն է ոչ զբաղելով ի կախ ձգել, այլ ի գնացք ասել, զի հասկանալի լիցի լսողաց. զի քերեալ եւ զտեալ եւ ճշմարիտ լիցին բանք երգոյն, ըստ խոհի օրինակին ի Շարակնոցն, զոր մեծ վարդապետն Գէորգ ուղղեաց, այն որ զնսայի մարգարէն մեկնեաց ի խընդրոյ Հեթում Թաղաւորին ի Սիւս, զի արհեստն առողանութեան խառնեալ լիցի երգոյն, զի զխորհուրդ բանին յայտնէ, որպէս նոյն խոհի օրինակն է, զոր սահմանեաց վարդապետն Գէորգ: Ձայս ամենայն պարտ է ի միասին հիւսել եւ ոլորակել ի ձայն երգոյն»:

Հ. Կ. ՔԻՊԱՐԵԱՆ

63. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուան, էջ 105:

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ՄԱՇՏՈՅՆԵՐՈՒ ՄԷՁ

(Շար. Բագմալեպ, 1971, Բ. 1-2, էջ 25-35)

Մկրտութեան բնագիւրներու ձեռագրական մեծ խումբերը բաժնելէ ետք, կ'անցնինք մաս առ մաս քննելու բուն բնագիրը, ջանալով ցոյց տալ թէ դարերու ընթացքին իւրաքանչիւրն անոնցմէ ի՞նչ փոփոխութիւններու ենթարկուած է, եւ թէ այսօր ի՞նչ ձեւով կը ներկայանան մեզի տպագիր օրինակներու մէջ: Մեր աչքին առջեւ ունինք երկու տպագրութիւններ, որոնք կը կիրարկուին այսօր Հայ եկեղեցիէն ներս. առաջինը՝ տպուած Վիեննա 1880ին, որ կը գործածուի կաթողիկէ համայնքէն, եւ երկրորդը տպուած Երուսաղէմ 1961ին, որ ընդհանրացած է Հայ Առաքելական եկեղեցիէն ներս:

1. ՎԵՐՆԱԳԻՐԸ

Մկրտութեան արարողութեան իբր վերնագիր՝ ձեռագիր Մաշտոցներու մէջ ընդհանրացած ձեւն է Կանոն Մկրտութեան, իսկ ստորին լուսանցքներու վրայ կը նշանակուին Մկրտութիւն կամ Կնունք բառերը: Սկզբնական շրջանին, այսինքն մինչեւ ԺԵ-ԺԶ դար, Մկրտութեան ու Դրոշմի արարողութիւնները նկատուած են իբր մէկ խորհուրդ, եւ այդ պատճառով իսկ ձեռագիրներու մէջ ամենեւին չենք հանդիպիր բաժանումի կամ նոր զլխակարգութեան. ԺԵ-ԺԶ դարուն Դրոշմի խորհուրդը կարծէք կը զանազանուի Մկրտութենէն, եւ որով Դրոշմի բնագրին ստորին լուսանցքներու վրայ կը նշանակուի Դրոշմ բառը՝ տարբեր Մկրտութիւնէն:

Բացի Կանոն Մկրտութեան ընդհանրացած ձեւէն, կը գտնենք ուրիշ կերպեր ալ, այսպէս Կանոն լուսաւոր Մկրտութեան (Ձեռ. Թիւ 1133, ԺԳ դար), Կանոն Մկրտութիւն առնելոյ (Ձեռ. Թիւ 1484, ԺԳ դար), Կանոն յորժամ քրիստոնեայ առնեն (Ձեռ. Թիւ 1304, ԺԴ դար), Կանոն յորժամ Մկրտութիւն կամիցին առնել (Ձեռ. Թիւ 522, տարի